ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 14 >> նոյեմբերի 2012թ. N 499

ք. Արմավիր

ԵՐՎԱՆԴ ՍԱՄՍՈՆԻ ՎԵՐՄԻՇՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐ ԱՐՏՈՒՇԻ ՎԵՐՄԻՇՅԱՆԻՆ, ԷԴՈՒԱՐԴ ԵՐՎԱՆԴԻ ՎԵՐՄԻՇՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՍՈՆ ԵՐՎԱՆԴԻ ՎԵՐՄԻՇՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2012 թվականի նոյեմեմբերի 13-ի N274-Ա որոշումը, Երվանդ Վերմիշյանի և Մեծամորի քաղաքապետարանի <<Մեծամորի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի միջև 2012 թվականի նոյեմբերի 13-ին կնքված բնակարանի վարձակալության մասին պայմանագիրը և Երվանդ Սամսոնի Վերմիշյանի 2012 թվականի նոյեմբերի 13-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Երվանդ Սամսոնի Վերմիշյանին, Գոհար Արտուշի Վերմիշյանին, Էդուարդ Երվանդի Վերմիշյանին և Սամսոն Երվանդի Վերմիշյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2012 թվականի նոյեմեմբերի 13-ի N274-Ա որոշմամբ վարձակալական հիմունքներով հատկացված Մեծամոր քաղաքի թիվ 25 շենքի թիվ 304 երկուսենյականոց բնակարանը՝ 48.5 քմ ընդհանուր մակերեսով, 35.0 քմ բնակելի մակերեսով անհատույց մասնավորեցնել՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով:
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***